

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԳՄՄՆ Գյումրու թիվ 1 ավագ դպրոց

Ավարտական հետազոտական աշխատանք

Առարկա՝ Կենսաբանություն

Թեմա՝ Երեխաների մոտ խրախուսումը, որպես ինքնագնահատականի բարձրացման, ինքնավստահության և մոտիվացիայի ամրապնդման միջոց

Կատարող՝ Լիլիթ Գևորգյան Վոլոդյայի

<<Գոգհովիտի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ

Կենսաբանություն

Ղեկավար՝ Ածիկյան Գոհար

ԲՈՎՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3-4

Գլուխ 1

Երեխաների մոտ խրախուսումը, որպես ինքնագնահատականի բարձրացման, ինքնավստահության և մոտիվացիայի ամրապնդման միջոց:

1. Խրախուսանք.....5-8

2. Ինքնագնահատական.....8-9

3. Ինքնավստահություն.....9-11

4. Դրական վարքագծի ամրապնդման հինգ սկզբունքները.....11-15

5. Տարբերությունը գովասանքի և խրախուսանքի միջև.....15-16

6. Խրախուսման հմտություններ.....17-18

7.Եզրակացություն.....19

8. Օգտագործված գրականության ցանկ.....20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մենք ծնվում ենք տկար, կարիք ունենք ուժի: Մենք ծնվում ենք ամեն ինչից զուրկ, կարիք ունենք օգնության: Մենք ծնվում ենք անմիտ, կարիք ունենք դատողության: Այն ամենը, ինչ մենք չունենք ծնվելիս, և որոնց մենք կարիքն ենք զգում մեծանալիս, ստանում ենք դաստիարակության միջոցով :

Այդ դաստիարակությունը մենք ստանում ենք կա՛մ բնությունից, կա՛մ մարդկանցից, կա՛մ իրերից: Մեր ընդունակությունների ու մեր օրգանիզմի ներքին զարգացումը բնությունից ստացած դաստիարակության գործն է. այդ զարգացումը օգտագործելու կերպը մեզ սովորեցնում է մարդկանց դաստիարակությունը. իսկ մեզ շրջապատող առարկաների նկատմամբ ունեցած մեր սեփական փորձառությունը իրերի դաստիարակությունն է:

Մեզանից յուրաքանչյուրին ձևավորում են երեք տարբեր ուսուցիչներ: Աշակերտը, որի մեջ այդ ուսուցիչների տարբեր դասերը հակադրվում են միմյանց, վատ է դաստիարակվում և երբեք համաձայն չի լինի ինքն իր հետ. իսկ աշակերտը, որի մեջ այդ դասերը ամբողջապես համընկնում են իրար և միևնույն նպատակին են ձգտում, նա՛ միայն դիմում է իր նպատակին և ապրում դրան համապատասխան: Դաստիարակության՝ որպես մանկավարժական գործընթացի ամենաէական առանձնահատկությունը երկկողմանիությունն է, քանի որ նրան մասնակցում են երկու սուբյեկտներ՝ դաստիարակը և սանը, որոնք կարող են համագործակցել, պլանավորել դաստիարակելու ենթակա հատկանիշները և դրանք սանին փոխանցելու, նրան հաղորդելու ուղիները, եղանակները, պայմանները, կազմակերպական ձևերն ու մեթոդները:

Դաստիարակության մեթոդները դաստիարակի և սանի համագործակցության ուղիներ և եղանակներ են: Դաստիարակության մեթոդները հանդիսանում են մանկավարժական ներգործության համակարգեր: Յուրաքանչյուր մեթոդ բաղկացած է համակարգը կազմող տարրերից, որոնցից ամենաէականները կոչվում են մեթոդական հնարներ:

Դաստիարակության հիմնական ֆունկցիաները համարվում են սանի հասարակական գիտակցության, հասարակական վարքի սովորությունների, կարողությունների և հմտությունների ձևավորումը, նրա վարքագծի և արարքների գնահատումն ու խթանումը:

Դաստիարակության մեթոդների դասակարգումն ըստ նրանց դաստիարակչական ֆունկցիաների ընդգրկում է երեք ինքնուրույն խմբեր.

- 1) անձնավորության հասարակական գիտակցությունը ձևավորող կամ համոզման մեթոդներ ,
- 2) անձնավորության կուլտուրական վարքը, հմտությունները, կարողությունները և սովորությունները ձևավորող կամ գործունեությունը կազմակերպող մեթոդներ ,
- 3) անձնավորության վարքագիծը (արարքներ) գնահատելու, խթանելու և բացասական վարքը կանխարգելելու մեթոդներ :

Ֆետագոտական աշխատանքի նպատակը և խնդիրները.

- Երեխաների մոտ խթանել ինքնագնահատականի, ինքնավստահության, աշխատասիրության, պատասխանատվության բարձրացումը:
- Խրախուսման միջոցով երեխաների մոտ ձևավորել ինքնավստահության և ինքնագնահատման հմտություններ:
- Բացահայտել դրական վարքագծի ամրապնդման սկզբունքները և խրախուսման հմտությունները:

Վերջնարդյունքները .

- Զարգացնի ինքնավերլուծության և ինքնաձանաչման հմտությունները, անձնային առանձնահատկությունները և սեփական կարողությունները, կարգավորի ինքնագնահատումը:

3.Ժան-Ժակ Ռուսո <<Էմիլ կամ դաստիարակության մասին>>, էջ11-12

2.Գ.Ե. Ղույունյան, <<Մանկավարժություն>>, էջ 157-160

Երեխաների մոտ խրախուսումը, որպես ինքնագնահատականի բարձրացման, ինքնավստահության և մոտիվացիայի ամրապնդման միջոց:

1.Խրախուսում

Խրախուսանքը սանի վարքագծի և արարքների դրական գնահատման ձև է: Նրա հիմնական ֆունկցիան սանի դրական վարքագիծը խթանելու, նրան ինքնավստահություն ներշնչելը և ավելի լավ արարքների մղելն է: Խրախուսել նշանակում է ընդունել սանի արարքների հասարակական արժեքավորությունը, ամրապնդել սանի հավատը իր ուժերի նկատմամբ և խթանել նրա արժեքավոր գործունեությունը: Խրախուսանքը կապված դրական հույզերի և վեհ զգացմունքների հետ: Ստոր, մանր, քաղթենիական պահանջմունքները խթանող խրախուսանքը հումանիստական մանկավարժության տեսակետից անարժեք է: **Խրախուսանքը հանդես է գալիս որպես արարքի դրական գնահատման ձև:** Այս իմաստով խրախուսանք է նաև երեխայի վատ, նույնիսկ հանցագործ և անբարոյական արարքները դրական գնահատելը, դրանց հավանություն տալը: Այսպես, օրինակ՝ դժվար է հավատալ,սակայն իրականում լինում են ծնողներ, ովքեր երեխաներին մղում են հակահասարակական արարքների՝ գողության , մուրացկանության և այլն: Հումանիստական մանկավարժությունը նպատակաուղղված է հասարակական արժեքավոր, վեհ, բարոյական, կատարյալ վարքի ամրապնդմանը, ուստի մանկավարժորեն թույլատրելի, կիրառելի է միայն երեխայի դրական վարքի խրախուսումը: Իսկ բացասական վարքի դրական գնահատումը հակաբարոյական, հակահասարակական հակամանկավարժական է:

Պատահում է, երբ դաստիարակը կամ ծնողը, չկարողանալով լուրջ գնահատել երեխայի այս կամ այն արարքի վտանգավոր հետևանքը, անզգույշորեն խրախուսում է երեխայի <<մանր>> չարաճճիությունները: Նա ոլորել է հավի վիզը՝ ոչինչ: Ժողովրդական առածն ասում է. <<Տղան ձու գողացավ, մայրը գովեց: Տղան մեծացավ և ձի գողացավ >> : <<Ձու գողացողը ձի էլ կգողանա>>. Ահա ժողովրդական իմաստուն մանկավարժության նախազգուշացումը: **Խրախուսել կարելի է միայն իսկապես դրական, հասարակայնորեն արժեքավոր արարքները:**Կարևոր է խրախուսանքի

չափի ճիշտ ընտրությունը: Այն պետք է համապատասխանի սանի արարքի իրական արժեքին, նրա գործադրած ջանքերի և խելքի մակարդակին: Խրախուսանքը պահանջում է անհատական մոտեցում, որպեսզի ուղղորդի երեխայի շարժումը դեպի դրական ու արժեքավորը, ամրապնդի նրա դրական դիրքորոշումն ու վարքագիծը: Խրախուսանքի կիրառումն ունի տարիքային տեսանկյուններ: Յուրաքանչյուր տարիքում այն պետք է փոխի իր ձևն ու բովանդակությունը: Կրտսեր դպրոցականի համար շատ կարևոր է, որ նրան ասեն՝ դու լավն ես, ուսուցիչը ժպտա և շոյի նրան:

Դեռահասի համար հասակակիցների կարծիքը ձեռք է բերում կարևոր նշանակություն: Դեռահասը կարող է հրաժարվել մեծերի, դաստիարակների ցանկացած խրախուսանքից, եթե այն չի արժանացել հասակակիցների հավանությանը: Ավագ դպրոցականը, պատանին կամ երիտասարդը խրախուսանքը գնահատում են իրենց ապագայի, հասարակական վարքի սոցիալական և հոգեբանական տեսանկյուններից:

Խրախուսանքը նշանակություն ունի բոլոր տարիքներում, սակայն հասուն տարիքում մարդը հաճախ իր համոզմունքների և բարոյական դիրքորոշման տեսանկյունից ինքն է գնահատում իր հասարակական վարքագիծը: Ուրիշների գովեստները, պարզևն ու խրախուսանքը հասուն մարդը կարող է մերժել և նույնիսկ համարել իր արժանապատվության համար վիրավորանք, **եթե խրախուսանքը կամ պարզևն իրեն տրվում է սեփական սկզբունքներին հակադիր մարդկանց կողմից: Պատմությանը հայտնի են մարդիկ, ովքեր սուլթանների և « տիրակալների » պարզևները զայրությամբ շարտել են նրանց երեսին՝ գերադասելով մահ, ոչ թե պարզև ընդունել նրանց արյունոտ ձեռքերից:**

Խրախուսանքը կարող է լինել բարոյական և նյութական: Բարոյական խրախուսանքի ձևերն են հավանություն տալը, շնորհակալություն հայտնելը: Երբեմն հասարակ ժեստը կամ ժպիտը, առանց խոսքերի կարող է կատարել լուրջ խրախուսանքի դեր: Ուսումնական հաստատություններում, ինչպես և աշխատանքային կոլեկտիվներում պետության կողմից սահմանվում են բարոյական խրախուսանքի պաշտոնական ձևեր՝ շնորհակալագրեր, պատվավոր մեդալներ և շքանշաններ:

Խրախուսանքի հասարակական և պաշտոնական կիրառումը ամբողջ սերնդի համար դաստիարակչական նշանակություն ունի: Ուստի նախ՝ անհրաժեշտ է, որ հասարակական ու պետական խրախուսանքի միջոցները կիրառվեն ըստ արժանվույն և երկրորդ՝ պատշաճ կերպով հանձնվեն պետական խրախուսանք ստացած մարդկանց: Եթե ժողովրդի և պետության խրախուսանքի արժանացած մարդն արհամարհվի, կարհամարհվի նաև ամեն մի ձգտում դեպի լավն ու բարին: Խրախուսանքը կարող է լինել նաև պարզևատրում՝ նյութական խրախուսանքի ձևով: Հատկապես դպրոցական տարիքում կարևոր է, որ նյութական խրախուսանքը հիմնվի բարոյական սկզբունքի վրա: Առաջին հերթին՝ ամեն մի պարզևատրություն պետք է լինի արդեն կատարված արարքի գնահատական: Եթե պարզևատրությունը նախապես պայմանավորված է, այն անբարոյական է, ստանում է սանի արարքը գնելու, նրան կաշառելու բնույթ:

Կարելի է նախապես պայմանավորվել գործունեության արդյունքների համար պարգևների վերաբերյալ: **Այս մեթոդը կոչվում է նաև սուբյեկտիվ, պրագմատիկ մեթոդ**, որի կոնկրետ ձևերը հետևյալն են.

- 1) կոնտրակտ (պայմանագիր), որ կնքվում է սանի և դաստիարակի միջև, հատուկ նշվում է կողմերի պարտականությունները.
- 2) ինքնակատարելագործման անձնական քարտեր, որոնք կազմում են դաստիարակներն ու ծնողները և մոտիվացնում են սանի ազատության և ինքնուրույնության ընդլայնմամբ.
- 3) ըստ հետաքրքրությունների տարանջատված խմբերի ստեղծում՝ վճարովի հիմունքներով, սաների անձնական շահագրգռվածության մեծացման նկատառումներով, ինչպես նաև իրավախախտումների հակված <<ոխակի խմբեր>> երեխաների անցանկալի վարքը կանխարգելելու համար.

- 4) մոնիտորինգ, այսինքն՝ սանի վարքագծի և սոցիալական հասունացման մանրակրկիտ դիտարկում: ԷՀՄ-ների միջոցով պարզվում են <<անհատական զարգացման>> միտումները, որոշվում է դաստիարակության այս կամ այն որակի ձևավորման << ճակատագրական սցենարը>> .
- 5) դաստիարակվածության քաղաքացիության և սոցիալական հասունացման թեստեր, որոնք <<ներդրված են>> մշտապես կազմակերպվող խաղերում, մրցույթներում և կոնկուրսներում .
- 6) տուգանքներ (բալերով և միավորներով), որոնք ենթադրում են լիովին իրական պատիժներ՝ կապված սանին որոշակի իրավունքներից, ազատություններից և արտոնություններից զրկելու հետ:

Սուբյեկտիվ – պրագմատիկ մեթոդը լայնորեն է կիրառվում եվրոպական զարգացած երկրներում: Այս մեթոդի որոշ տարրեր (հատկապես 3-6-ը) պահանջում են ոչ միայն մեթոդամանկավարժական գործիքավորում, այլև իրավական հիմնավորում, որոնք կարելի է նախատեսել հանրակրթության, ետբուհական կրթության մասին և այլ հարակից օրենքներով և ուսումնական հաստատությունների կանոնադրություններում:

1. Գ.Ե. Ղուլումյան <<Մանկավարժություն>> էջ 186-190

2.Ինքնագնահատական

Ինքնագնահատականը մարդու ինքնագիտակցության բաղկացուցիչ մասն է, որի միջոցով անհատը գնահատում է սեփական կարողությունները, հմտությունները, արժեքները և թերությունները: Ընդհանուր ինքնագնահատականը կազմվում է

մասնավոր ինքնագնահատականներից, որոնք վերաբերվում են անհատի գործնության մի որևէ բնագավառի կամ որակների առանձին խմբի: Տարբերակում են ֆիզիկական, մտավոր կարողությունների, բնավորության այլ ինքնագնահատականներ:

Մանկության ժամանակ ինքնագնահատականը մեծապես կախված է շրջապատի, հատկապես, ծնողների և այլ նշանակալի մարդկանց գնահատականներից: Այդ տենդենցը հետագայում պահպանվում է. չնայած որ անձը գնալով հասարակության և սոցիումի ազդեցությունից ավելի ու ավելի անկախ ինքնագնահատական է ձեռք բերում, դրա ձևավորման վրա շարունակում են ազդեցություն ունենալ նշանակալի մարդկանց ու խմբերի կարծիքները: Տարիքի աճին զուգընթաց ինքնագնահատականը դառնում է առավել տարբերակված՝ անհատը կյանքի տարբեր ոլորտներում իրեն գնահատում է անկախ մյուս ոլորտներում կրած հաջողություններից կամ անհաջողություններից: Շատ հետազոտողներ այս երևույթը կապում են իմացական ոլորտի զարգացման՝ վերլուծելու և վերացարկելու կարողությունների զարգացման հետ:

3.Ինքնավստահություն

Ինքնավստահություն, անձնային հատկություն, որի հիմքն անձի կողմից սեփական հմտությունների և ընդունակությունների դրական գնահատումն է, որը բավարար է նրա համար կարևոր նպատակների իրականացման և պահանջմունքների բավարարման համար: Ինքնավստահությունը՝ որպես ադեկվատ վարքագծի հիմք, պետք է տարբերակել անձնավստահությունից, որի դեպքում անձը վստահ է իր մեջ բացասական հատկանիշների բացակայության հարցում: Ինքնավստահության

ձևավորման համար հիմք է ծառայում բավարար վարքագծային ռեպերտուարը, սոցիալական խնդիրների լուծման դրական փորձը և սեփական նպատակներին հաջողությամբ հասնելը: Ինքնավստահություն ձևավորելու համար կարևոր է ոչ այնքան կյանքի օբյեկտիվ հաջողությունը, սոցիալական կարգավիճակը, փողը և այլն, որքան սեփական գործողությունների արդյունքների սուբյեկտիվ դրական գնահատականը և կարևոր մարդկանց գնահատականները: Սեփական հմտությունների և ընդունակությունների առկայության, <<որակի>> և արդյունաբերության դրական գնահատականը հանգեցնում է սոցիալական քաջության, որն իր հերթին պայմաններ է ստեղծում խնդիրները լուծելու, նոր նպատակներ սահմանելու և դրանց իրագործման ժամանակ նախաձեռնողականություն դրսևորելու համար: Սոցիալական խիզախությունը հակադրվում է սոցիալական վախերին և արտահայտվում է ցանկացած, այդ թվում՝ նոր, սոցիալական շփումներին ուղեկցող դրական հուզական ֆոնով: Հարաբերություններում նախաձեռնությունը նման շփումների պատրաստ լինելն է: Ն. Ի. Կոզլովի կարծիքով ինքնավստահությունը ներառում է երեք հիմնական բաղադրիչ.

- վստահության զգացում (ուժի, իրավունքի և իրավացության զգացում),
- վստահ վարքագիծ, որը ցույց է տալիս ուժ և բնորոշ է ուժեղ դրվածք ունեցող մարդկանց,
- հաստատականություն (որոշումների կայացման գործում վճռականություն և ճշգրտություն, գործում է առանց վարանելու):

Շատերը տառապում են ինքնավստահության պակասից, բայց մեր իրականությունում կարծես թե հակառակն է. խոսում ես շատ մարդկանց հետ, և թվում է, թե մոլորակի առանցքը հենց իրենք են: Ավաղ, քիչ են այն մարդիկ, որոնց ավելորդ ինքնավստահությունը բխում է նրանց գերազանց իմացությունից և կայուն ներաշխարհից: Հակառակը՝ բարձրահունչ և չափից ավելի ինքնավստահ երևացող մարդկանց կարելի է տարբերակել ըստ մի քանի խմբերի: Քիչ են նաև նրանք, ում ավելորդ ինքնավստահությունը գալիս է պարզապես հասարակական վարվեցողության կանոնների բացակայությունից: Մարդիկ անկաշկանդ են ոչ միայն այն դեպքում, երբ գիտակցաբար գնում են առաջ, բայց նաև, երբ չգիտեն սպասվող խնդիրների իրական վտանգը, արժեքը կամ հետևանքը: Մյուս կողմից՝ հատկապես կայացման տարիներին շատանում են նրանք, ովքեր լինելով կիրթ, գրագետ ու ժուժկալ, շարունակ խնդիրներ են ունենում ինքնահաստատման և շրջապատում իրենց արժանավոր դիրք և տեղ գրավելու հարցում:

Սեփական անձն ու վստահությունը վերագնահատելը հեշտ գործ չէ: Այստեղ շատ կարևոր է մի կողմից բացահայտել սեփական հնարավորությունների սահմանը, մյուս կողմից՝ չանցնել այդ սահմանն ու դառնալ ինքնասիրահարված ու ինքնահավան:

(4, 5. 19. 08. 2023թ.)

4. Դրական և բացասական ամրապնդում

Հիասթափություն և մոտիվացիայի պակաս: Տարբեր տարիքի երեխաններ, ովքեր թեև օժտված են լինում որոշակի ունակություններով, հաճախ հիասթափվում են իրենց հնարավորություններից՝ կորցնելով սովորելու և ակտիվ գործելու

հետաքրքրությունն ու մոտիվացիան: Նրանք համոզված են, որ իրավիճակն անուղղելի է: Նրանք թերագնահատում են իրենց ուժերը և չեն կարողանում հաղթահարել դժվարությունները՝ հեշտությամբ կորցնելով ինքնավստահությունն ու ընդհանրապես դադարեցնելով հետագա աշխատանքը: Կրթական հետազոտությունները ցույց են տվել, որ անհնազանդ և վատ վարքագծով երեխաների մեջ մեծ թիվ են կազմում ինչ-որ պատճառով հիասթափված երեխաները: Նրանց մոտ այլևս չի դրսևորվում որևէ գործնելիությամբ զբաղվելու մոտիվացիա կամ հետաքրքրվածություն:

Երեխաների <<դպրոցական անհաջողությունների>> պատճառը հատկապես դեռահասների դեպքում, հիասթափությունն է: Որոշ երեխաներ զգում են, որ չեն կարողանում բավարարել իրենց ծնողների կամ ուսուցիչների ակնկալիքները: Մյուսները կարծում են, որ ուսուցիչներն ու ծնողները չեն գնահատում իրենց ըստ արժանավույն: Պատահում է, որ երեխաները որոշում են նույնիսկ փորձեր չկատարել՝ համապատասխանելու մեծահասակների ակնկալիքներին ու չափանիշներին: Նրանք աստիճանաբար կորցնում են ամեն հետաքրքրվածություն և դադարում ջանք գործադրելուց՝ չհասկանալով, որ կյանքը շարունակական ուսուցման գործընթաց է՝ լի փորձություններով և սխալներով:

Դրական ամրապնդում

Փոքր երեխաները ձգտում են ունկնդրել, սիրել և հիանալ իրենց ուսուցիչներով: Երեխաների ջանքերը նկատելի են բոլորի համար և նրանք պարզևատրվում են շրջապատի մարդկանց ժպիտներով և ուշադրությամբ: Արժանանալով մեծահասակների դրական վերաբերմունքին՝ երեխաները ցանկություն են արտահայտում շարունակել իրենց համագործակցությունը և ջանքերը: Սիրված և հարգված լինելու դրական զգացումներն ամրապնդում են երեխաների մյուս ներքին

դրական զգացողությունները, որոնք իրենց հերթին, հանգեցնում են դրական սովորությունների և հատկությունների ձևավորմանը: Այս գործընթացը տեղի է ունենում պարուրաձև, այլ ոչ թե ուղղաձիճ. Յուրաքանչյուր դրական հատկություն կարող է հեշտությամբ մոռացության մատնվել ոչ պարբերաբար ամրապնդվելու դեպքում:

Բացասական ամրապնդում

Մեծահասակներից շատերը հակված են ավելի ցածր գնահատելու վատ վարքագիծ ունեցող երեխաներին, քան նրանք իրականում արժանի են՝ նրանց նկատմամբ դրսևորելով բացասական, արհամարհական վերաբերմունք: Երբ մեծահասակները թերագնահատում կամ նվաստացնում են երեխաներին, վերջիններս բարկություն, հիասթափություն, անգորություն և երբեմն ճնշվածություն են զգում: Երեխանների հետաքրքրությունն ուսման նկատմամբ նվազում է, նրանք սկսում են վախենալ դասապատրաստումից, և բոլորովին կորցնելով մոտիվացիան, կարող են ընդհանրապես դադարել որևէ ջանք գործադրել: Եթե տանը կամ դպրոցում մեծահասակների վերաբերմունքի հետևանքով երեխան իրեն անգոր, վիրավորված, վախեցած, ամոթահար կամ անապահով է զգում, ապա նա զրկվում է բնականոն զարգացում ապրելու հնարավորությունից:

Դպրոցականների զարգացումն ընթանում է տարբեր պայմաններում: Կան երեխաններ, ովքեր գալիս են դպրոց առանց լեզվական, էմոցիոնալ և վարքագծային պատրաստվածության: Եթե նախկինում անգորության զգացում ապրած աշակերտը կրկին անհաջողությունների է հանդիպում, այդ զգացումը խորանում է: Իսկ եթե նա ծաղրի առարկա է դառնում դասընկերների համար, ապա խորին հիասթափություն է ապրում: Նրա մոտիվացիան իրապես նվազում է, նա սկսում է ավելի և ավելի քիչ ջանքեր գործադրել: Որքան քիչ ջանք է ներդնում երեխան, այնքան շատ անհաջողություններ է ունենում, օրինակ՝ ցածր գնահատականներ, քննադատություն, դիտողություն, վիրավորանք: Նա կարող է մնալ նույն դասարանում: Այս երևույթը նման է արատավոր շղթայի՝ դեպի ներքև ուղղված պարույրով:

Առանձին դեպքերում աշակերտներն ընդհանրապես հրաժարվում են սովորելուց:

Նրանք անգոր են և միայնակ են զգում իրենց: Լինում են հիասթափություն ապրող երեխաներ, ուլքեր զգում են վիրավորվածություն, վախ, բարկություն, շփոթվածություն, վրդովմունք և նույնիսկ ունենում են բռնության պոռթկումներ: Մի շարք գործոններ, որոնք նպաստում են արատավոր շղթայի առաջացմանը.

- Անբարենպաստ ընտանեկան մթնոլորտ:
- Վիրավորանք, քննադատություն, անտեսում, կշտամբանք, մարմնական պատիժ երեխայի նկատմամբ:
- Թույլ լեզվային զարգացում:
- Անօգնականության զգացում օգնության կարիք զգալու պահին:
- Վիրավորական դիտարկումներ ընկերների կողմից:
- Մեղադրանք կամ մեկուսացում ընկերների կողմից:
- Վատ սնուցում:

Ուսուցիչները և ծնողներն ընկճված և անգոր են զգում, երբ իրենց երեխաները կամ աշակերտները վատ են պահում իրենց: Վերահսկողություն հաստատելու փորձեր կատարելով՝ նրանք կարծում են, որ հարկավոր է պատժել երեխաներին: Այս վերաբերմունքը ոչ միայն անարդյունավետ է, այլ նաև վնասակար, քանի որ դրա հետևանքով երեխաները դառնում են առավել մտահոգ և լարված, ինչը դանդաղեցնում է նրանց զարգացման առաջընթացը և խոչընդոտում ուսման գործընթացին: Եթե ծնողները դրդում են երեխաներին փոխել իրենց վարքագիծը՝ վախեցնելով նրանց այնպիսի պատժամիջոցներով, ինչպիսիք են ծեծը կամ կշտամբանքը, ապա երեխաները կարող են մերժված և արհամարհված զգալ՝ արդյունքում համագործարկեցելու փոխարեն ընդդիմանալով ծնողներին: Հնարավոր է, որ վարքային փոփոխությունը տեղի ունենա, սակայն միայն ուժի, այլ ոչ թե փոխըմբռնման և համատեղ ջանքերի միջոցով: Մեծահասակները պետք է համագործակցեն երեխայի հետ:

Երեխաները խրախուսման կարիք են զգում՝ ինքնավստահ և մոտիվացված զգալու համար: Մանկական կրթության գծով մասնագետ, երեխաների նկատմամբ դրական կրթական մեթոդների կիրառման կողմնակից Ռ. Դրեյկուրսը շեշտում է, որ

խրախուսումն ամենակարևոր հմտությունն է, որ երբևիցե կարող է կիրառվել մեծահասակների կողմից երեխային օգնելու համար:

5. Դրական վարքագծի ամրապնդման հինգ սկզբունքները

1. Գովեք երեխային իրական, կոնկրետ նվաճման համար: Շատ ծնողներ քիչ ուշադրություն են դարձնում երեխայի դրական վարքագծին՝ կենտրոնանալով միայն նրա սխալների բացասական վարքագծի վրա: Դրական վարքագիծն ամրապնդելու համար նախ և առաջ պետք է տարանջատել երեխայի լավ և վատ վարքագծերը: Օրինակ, եթե վեց կամ յոթամյա երեխան չի կարողանում գեղեցիկ գրել, կարելի է նրան խրախուսել՝ իր աշխատանքի մեջ գտնելով մի քանի գեղեցիկ գրված բառեր: Քնքշորեն նշել, որ «այս բառը գրված է պարզ և ճիշտ տողում է»: Երեխան երջանիկ, ինքնավստահ և քաջալերված կզգա իրեն և կսովորի ավելի լավ գրել՝ որպես նմուշ նայելով գեղեցիկ գրված բառերին: Դրական ուղերձ փոխանցելու համար շատ կարևոր են մեծահասակների վերաբերմունքը և ձայնի տոնը: Խրախուսումը խիստ կարևոր է բարդ իրավիճակում հայտնված երեխաների և ուսման մեջ ոչ այնքան հաջողակ երեխաների համար: Ուսումնական բարձր արդյունքներ դրսևորող երեխաները սովորաբար մեծ չափով դրական ամրապնդում են ստանում իրենց ծնողների, ուսուցիչների և դասընկերների կողմից:

2. Կոնկրետ դրական վարքագծի խրախուսում և արժանիքների մատնանշում:

Օրինակ, «Շատ լավ է, որ կարողացար գույել քեզ և չհարվածել նրանց քեզ ծաղրելու համար: Դու ցույց տվեցիր, որ դու ուժեղ ես և համբերատար»: Երեխաները լավ կհիշեն այն արժեքները, որոնք, ըստ մեր խոսքերի, նրանք դրսևորեցին կոնկրետ իրավիճակներում: Այն օգնում է երեխաներին փոխել իրենց բնական արձագանքը բացասական վերաբերմունքի նկատմամբ ավելի դրական որևէ զգացումի, ինչի շնորհիվ բարձրանում է իրենց ինքնագնահատականը և խթանվում է համբերատարությունը:

3. Անկեղծ եղեք: Անկեղծ եղե՛ք, երբ գովասանքի խոսքեր եք ասում կամ խրախուսում եք ձեր երեխաներին, քանզի անկեղծությունն է այն կարևորագույն գործիքը, որի շնորհիվ երեխաները հարգված են զգում իրենց՝ կարողանալով ըստ արժանավույն գնահատել սեփական ջանքերն ու առաջընթացը: Հայացքն ու ձայնի տոնը

անկեղծության անգնահատելի նշաններ են, որոնց հեշտությամբ կարելի է տարբերակել ցանկացած տարիքում: Երեքամյա մի աղջիկ, ով ավարտել է նկարը կուրախանա և կոզկորվի, եթե ինչ-որ մեկը բարությամբ նայի իրեն, ժպտա և ասի. «Օ՜, ապա նայի՛ր, թե որքան շատ գույներ ես օգտագործել, իսկ շրջանակները, իսկ ուղիղ գծերը...»: Այսպիսի մանրակրկիտ նկարագրությունը գուցե որպես գովասանք կամ խրախուսանք չի հնչում, սակայն այն դրական ամրապնդում է ապահովում երեխայի համար:

4. Դրսևորեք անկեղծություն և դրական զգացումներ: Երբեմն խրախուսումը կամ գովեստը սկսվում են որևէ դրական մեկնաբանությամբ, սակայն վերջում բացասական երանգավորում է ստանում: Օրինակ. Երեխան լավ է կատարել իր հանձնարարությունը, իսկ ուսուցիչը կամ ծնողը ասում է. «Կեցցե՛ս : Այսօր շատ լավ ես աշխատել: Ինչու՞ միշտ այդպես չես անում»: Առաջին դիտարկումը խրախուսական է, սակայն դրական զգացումն արագ փարատվում է վերջնական քննադատության կամ բացասական մեկնաբանության ազդեցության ներքո:

5. Արձագանքեք առանց հապաղելու: Դրական վարքագիծը պետք է խրախուսման արժանանա անմիջապես այն դրսևորելուց հետո: Խրախուսեք երեխային, որ նա փորձի նոր վարքագիծ հաստատել ձեր օգնությամբ: Օրինակ, դասապատրաստման ինքնուրույն փորձերը. «Ապրե՛ս, արդեն լավ է ստացվում: Երբ վերջացնես այս երեք վարժությունները, կբերես՝ տեսնեմ»: Անպայման ժամանակ գտեք՝ տեսնելու թե ինչպես է երեխան կատարել վարժությունները, երբ նա բերում է ձեզ մոտ իր տետրը, և գնահատեք նրա աշխատանքը: Հետագայում կարելի է աստիճանաբար ավելացնել ինքնուրույն կատարվող վարժությունների քանակը: Նոր վարքագիծ հաստատելու համար հարկավոր է պարբերաբար խրախուսել երեխային, և աստիճանաբար նվազեցնել խրախուսումը, երբ վարքագիծը վերածվում է սովորության: Գնահատվում և հարգանք է ցուցաբերվում երեխայի անհատական ընդունակությունների նկատմամբ:

6. Տարբերությունը գովասանքի և խրախուսման միջև:

Գովասանքն ու խրախուսումը հաճախ դիտվում են որպես հոմանիշներ: Շատերը համաձայնում են, որ գովասանքը վարքագծային փոփոխման արդյունավետ գործիք է: Գովասանքը տարբերվում է խրախուսումից կիրառական ժամանակի և արդյունավետության առումներով:

Խրախուսում

1. Խրախուսումը տրվում է մինչև որևէ գործողություն նախաձեռնելը և այն իրականացնելուց հետո, ընդ որում, ոչ միայն երեխայի հաջողության առկայության դեպքում, այլ նաև ինչ-որ դժվարության կամ անհաջողության ժամանակ:
2. Խրախուսում տրվում է բոլոր երեխաներին, իրենց կողմից կատարված յուրաքանչյուր փորձի կամ քայլի համար, որով նշանավոր է իրենց առաջընթացը: Ստանալով բավական չափով խրախուսում՝ երեխաները կարողանում են արձանագրել գովասանքի արժանի հաջողություն:
3. Երեխաները ինքնագնահատում են կատարում. Երեխաները իրենք են որոշում՝ արդյո՞ք բավարարված են ստացված արդյունքներով թե՞ ոչ: Նրանք սահմանում են սեփական չափանիշները՝ ծնողների կամ ուսուցիչների մասնակցությամբ:
4. Խրախուսման շնորհիվ երեխաները սկսում են հպարտանալ իրենց հաջողություններով և ջանքերով՝ ձեռք բերելով գործելու ներքին մոտիվացիա:
5. Մեծահասակները հատուկ տեղ են տալիս այն երեխաներին, ովքեր փոխգործակցության բարձր աստիճան են դրսևորում:

Գովասանք

1. Գովասանք տրվում է ինչ-որ ձեռքբերումից հետո, և երբ երեխան հաջողություններ է ունենում:
2. Գովասանքը կարող է տրվել նվաճում ձեռք բերած երեխաներին, այն կարող է տրվել դրամական պարգևի կամ մրցանակի տեսքով:

3. Մեծահասակները գնահատում են երեխաների առաջընթացը և ստանդարտներ են սահմանում չնչին կամ գրեթե առանց փոխադարձ մասնակցության:
4. Ցույց է տալիս մեծահասակների ակնկալիքները և գնահատականների կարևորումը:
5. Երեխաները ենթարկվում և հետևում են իրենց ծնողների կամ ուսուցիչների հանձնարարականներին, սակայն խորապես չեն գիտակցում, թե ինչու են այդ անում:
6. Գովասանքը և պարզները կարող են ընկալվել որպես կաշառման տեսակ: Օրինակ՝ « Եթե դու բարձր գնահատական ստանաս, ես քեզ որոշ գումար կտամ»: Երեխան կսովորի, որ երբեք ոչինչ չպետք է անել, եթե դրա դիմաց որևէ բան չես ստանում:

7.Խրախուսման հմտություններ

Խրախուսումը կարող է արտահայտվել ժպիտի, ձայնի տոնի, գլխի թեթև շարժման, երեխայի ուսին խրախուսաբար թփթփացնելու միջոցով, ինչպես նաև բարձր գնահատական տալով երեխայի ջանքերին և առաջընթացին: Ինչպես ցանկացած վարքագիծ, արդյունավետ խրախուսումը կարելի է յուրացնել և կատարելագործել: Խրախուսմանը նպաստող հմտություններն են.

1. Ինչպես արտահայտել, որ դուք հասկանում, համակրում և ընդունում եք ձեր երեխաններին
2. Ուժեղ կողմերի և ջանքերի վրա կենտրոնանալու հմտությունները
3. Ստեղծված իրավիճակի դրական կողմերի բացահայտման և իրավիճակը այլ տեսանկյունից ընկալելու հմտություն
4. Չանքերի և առաջընթացի վրա կենտրոնանալու հմտություններ
5. Համեմատել պատիժը, ամենաթողությունը (ավելորդ պաշտպանություն) և խրախուսումը

2. «Դաստիարակության դրական մոտեցումներ» Ուսումնական ձեռնարկ, էջ 173-199

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Խրախուսումը երեխաներին հավատ է ներշնչում իրենց անձի, սեփական ուժերի և ընդունակությունների հանդեպ, առջացնում է նոր եռանդ և ձգտում: Խրախուսման ժամանակ պետք է պահպանել մանկավարժական տակտը, լինել հիմնավորված և արդարացի, խրախուսել ոչ միայն ձեռք բերած հաջողությունները, այլև երեխայի ջանասիրությունը, աշխատասիրությունը, նախաձեռնությունը և այլն: Խրախուսումը երեխաներին պարտավորեցնում է լինել կատարյալ, բարձրացնում է պատասխանատվությանը զգացումը, ինքնավստահությունը, ինքնագնահատականը, նոր հեռանկարներ է բացում նրանց առջև:

Երեխաներին խրախուսում և ուսուցանում է իրենց շրջապատող միջավայրը:

- Եթե երեխաներին հաճախ ենք գովում, նրանք սովորում են գնահատել:
- Եթե երեխաներին հաճախ ենք հավանություն տալիս, խրախուսում, նրանք սովորում են իրենք իրենց լավ վերաբերվել:
- Եթե երեխաներին հաճախ ենք ուրախացնում, նրանք ինքնավստահություն են ձեռք բերում:
- Եթե երեխաներն ապրում են համերաշխ մթնոլորտում և իրենց պիտանի են զգում, նրանք սովորում են սեր գտնել այս աշխարհում:
- Եթե երեխաների հետ ազնիվ ենք լինում, նրանք սովորում են արդար լինել:
- Պետք է միշտ լսենք և պատասխանենք մեզ դիմող երեխաներին:

Երեխաների հետ շփման ժամանակ մշտապես դրսևորենք լավ վարքագիծ, փոխանցենք նրանց մեր մեջ եղած դրականը: Մենք պետք է խրախուսենք երեխաների դրական վարքագծերը՝ նրաց ընձեռելով պատասխանատու մեծահասակներ դառնալու հնարավորություն:

Խնչպես բույսը՝ ջրի, այնպես էլ յուրաքանչյուր երեխա շարունակական խրախուսման կարիք ունի: Նա չի կարող գոյություն ունենալ և աճել առանց խրախուսման:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գ. Ե. Ղուկումջյան <<Մանկավարժություն>>, (Գիրք II), Երևան -2005
2. <<Դաստիարակության դրական մոտեցումներ>>, Ուսումնական ձեռնարկ, Երևան -2016
3. Ժան-ժակ Ռուսո <<Էմիլ կամ դաստիարակության մասին>> Առաջին մաս, Երևան -1960
4. <https://hy.m.wikipedia.org/wiki>
5. <https://www.dasaran.net/wiki/view>